ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«21» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 247 - 25

Նախաձեռնող՝ **«ՀԻԴՐՈ» ՍՊԸ**
ք. Սիսիան, Շիրվանզադե 5

Գործունեությունը՝ **Որոտնավանի բազալտային անդեզիտների հանքավայրի արդյունահանում**
Սյունիքի մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 247 - 25

«21» հոկտեմբեր 2025թ.

Սյունիքի մարզի Որոտնավանի բազալտային անդեզիտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՀԻԴՐՈ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /«Ա» կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Որատնավան բնակավայր

Ներածական մաս. Սյունիքի մարզի Որոտնավանի բազալտային անդեզիտների հանքավայրից հայցվող տեղամասում «ՀԻԴՐՈ» ՍՊԸ-ն նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի «թ» ենթակետի, դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Որոտնավանի բազալտային անդեզիտների հանքավայրի տարածքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի համանուն գյուղի վարչական տարածքում: Հանքավայրն Սիսիան քաղաքի հետ կապված է 10-15 կմ երկարությամբ ասֆալտապատ ճանապարհով: Արդյունահանման նպատակով հայցվող տարածքը զբաղեցնում է մոտ 1.41 հա տարածք: Հանքավայրն ուղիղ գծով Որոտնավան գյուղի կենտրոնից գտնվում է 1,332 կմ դեպի հարավ-արևելք, Շամբ գյուղի կենտրոնից՝ 1,512 կմ դեպի հյուսիս, Վաղատին գյուղի կենտրոնից՝ 3,859 կմ դեպի հարավ-արևելք հեռավորությունների վրա: Հանքավայրը ուղիղ գծով Որոտնավան բնակավայրի մոտակա շինությունից գտնվում է 713 մ դեպի արևելք, Շամբ բնակավայրի մոտակա շինությունից՝ 1,052 կմ դեպի հյուսիս, Վաղատին բնակավայրի մոտակա շինությունից՝ 2,255 կմ դեպի հարավ-արևելք հեռավորությունների վրա: Դավիթ Բեկի ամրոցը, Մելիք Թանգու կամուրջը, Որոտնավանի տաք ջուրը գտնվում են Որոտնավան գյուղից հարավ և հարավ-արևմուտք՝ հայցվող տարածքից 1,1 կմ հեռավորության վրա՝ Որոտան գետի հովտում և տվյալ տարածքներից հայցվող տարածքը ընդհանրապես տեսանելի չէ՝ կապված բացարձակ բարձրությունների հետ:

Սյունիքի մարզի Որոտնավանի բազալտային անդեզիտների հանքավայրի պաշարները 01.06.2023 թվականի դրությամբ հաստատվել են ՀՀ ՏԿԵ նախարարի 17 մայիսի 2024թ թիվ 1033-Ա հրամանով: Հաստատված պաշարները դիտարկել որպես՝ խճի արտադրության հումք՝ ՀՍՏ ԳՕՍՏ 8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար», շինարարական ավազի արտադրության հումք՝ ԳՕՍՏ 8736-2014 «Ավազ շինարարական աշխատանքների համար»: Բացահանքի աշխատանքային նախագծով նախատեսվում է՝ արդյունահանման աշխատանքները նախատեսված է կատարել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված

հիդրավլիկ մուրճով, հանքարդյունահանման աշխատանքները նախատեսված է կատարել շուրջտարյա աշխատանքային ռեժիմով՝ 260 օր, մարվող պաշարների քանակն է՝ 432 հազ. խմ, տարեկան արտադրողականությունը՝ 21600 մ մարվող պաշար, կորզվող պաշարները կազմում են 321.409 հազ. խմ, տարեկան արդյունահանվող պաշարները՝ 16500 խմ: Բացահանքի օտարման տարածքը կազմում է 13723 քմ /1,37 հա/, ծառայման ժամկետը՝ 19,5 տարի: Բացահանքը վերջնական դիրքում նախատեսվում է հետևյալ պարամետրերով՝ ամենամեծ երկարությունը՝ 165 մ, ամենամեծ լայնությունը՝ 115 մ, բացահանքի առավելագույն խորությունը՝ 33.0 մ, մակաբացման ապարների միջին հզորությունը՝ 2,36 մ, օգտակար հանածոյի միջին հզորությունը՝ 31,48 մ, օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները՝ 432 հազ. խմ, արդյունահանվող պաշարների քանակը՝ 321,409 հազ. խմ, մակաբացման ապարների քանակը (հողաբուսական շերտ բազալտային անդեզիտների հողմահարված, քայքայված, ջարդոտված բեկորներով)՝ 23735 խմ, բացահանքի օտարման մակերեսը՝ 13723 քմ /1,37հա/, բացահանքի հատակի նիշը՝ 1510 մ, բացահանքի կողի թեքման անկյունը՝ 520 մ, հայցվող տարածքում չխախտված մակերեսը, որտեղ առկա են մակաբացման ապարներ՝ 10059 քմ /1,0 հա/:

Տարածքի ծայրակետերի կոորդինատները ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝

1. Y=8599016, X=4372517,
2. Y=8599018, X=4372627,
3. Y=8599083 X=4372667,
4. Y=8599109.5864, X=4372667.8717,
5. Y=8599145.9984, X=4372614.0756,
6. Y=8599127, X=4372598,
7. Y=8599097, X=4372525,

Համաձայն հաշվետվության տեղեկատվության՝ ուսումնասիրվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը: Արդյունահանման տարածքի մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, տարածքն անմիջական սահմաններ չունի ԲՀՊՏ-ների հետ: Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է բարձման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Շրջակա միջավայրի վրա փոշու ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսվող փոշենստեցման համար ջրցանն իրականացվելու է այնպիսի ծավալներով, որ չառաջանա արտահոսք: Խմելու և տեխնիկական ջուրը մատակարարվելու է ցիստեռններով: Նախնական նկատառումներով խմելու և տեխնիկական ջրամատակարարման մասով ընկերությունը նախատեսում է պայմանագիր կնքել Սիսիան համայնքի «Ջրամատակարարման ծառայություն» համայնքային հիմնարկի հետ: Կենցաղային կեղտաջրերը կուտակվելու են հորատիպ բետոնապատ, անջրթափանց զուգարանում, որոնց հեռացումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով, Սիսիանի համայնքի «Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություն» համայնքային հիմնարկի միջոցով: Վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկը կատարվել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի կողմից հաստատված համակարգչային ծրագրերի հիման վրա՝ УПРЗА «ЭКО центр»: Ցրման հաշվարկի արդյունքները ցույց են տալիս, որ արտանետվող բոլոր նյութերի համար գետնամերձ կոնցենտրացիաները չեն գերազանցում տվյալ նյութի ՍԹԿ-ն: Գնահատվել է գետնամերձ կոնցենտրացիաները արտադրահրապարակի եզրին և սանիտարապաշտպանական գոտու եզրին և մոտակա բնակավայրի եզրին: Ցրման հաշվարկում հաշվի է առնվել ֆոնային աղտոտվածության տվյալները:

Բացահանքի շահագործման ավարտից հետո լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի են ենթարկվելու բացահանքի հատակը 6059 քմ, արտաքին լցակույտի առաջին հարթակի մակերևույթը՝ 3332 քմ և ավտոճանապարհը՝ 275 մ երկարությամբ, 1925 քմ մակերեսով: Ընդհանուր մակերեսը կազմում է 11316 քմ /1,13հա/: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա: Ընդհանուր ռեկուլտիվացիոն աշխատանքների արժեքը կկազմի 2282.3 հազար ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները՝ փոշիացումը նվազեցնելու նպատակով տարվա չոր և շոգ եղանակին կատարել ջրցանում, բացահանքում աշխատող տեխնիկայի շարժիչների վառուցքները պետք է լինեն կարգավորված՝ անսարք մեքենաների շահագործումը բացահանքում պետք է արգելվի: Մեքենաների շարժիչների գազերի արտանետման վրա պետք է տեղադրված լինեն կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչն արտանետումը մթնոլորտ թույլ կտա կրճատել գազերի թափոնները պարբերաբար դուրս բերել բացահանքի տարածքից և տեղադրել հատուկ նախատեսված հարթակներում կամ վաճառել: Ներհանքային ճանապարհների բարեկարգման ուղղությունների և մեթոդների կիրառելիության ուսումնասիրություն՝ խճապատում մակաբացման շերտի ապարներով, ինչը թույլ կտա կրճատել փոշեգոյացման ծավալները: Մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում, ստացված տվյալների վերլուծություն՝ ըստ անհրաժեշտության բնապահպանական միջոցառումների վերանայում, արտադրական տարածքի կանաչապատում՝ արագ աճող ծառատեսակներով կամ թփերով: Նավթամթերքներ պարունակող թափոնների (յուղոտ լաթեր, բանեցված, ավտոմոբիլային, դիզելային շարժիչների յուղեր) առանձին հավաքում մատնանշված, ամուր փակվող տարողությունների մեջ: Տարողությունների տեղադրում հատուկ հրապարակներում, ջերմության աղբյուրներից սահմանված հեռավորությունների վրա, ընկերության ավտոպարկի վերալիցքավորման, յուղի փոխման, ավտոդողերի փոխման կամ ընթացիկ այլ սպասարկման գործընթացներ կատարվելու են համայնքի տարածքում գործող մասնագիտացված կազմակերպություններում: Չտեսակավորված կենցաղային աղբը տեղափոխվելու է աղբավայր փակ կողեր ունեցող ինքնաթափով՝ սպասարկման պայմանագրի կնքելով ծառայություն մատուցող կազմակերպության հետ:

Աղմուկի աղբյուր հանդիսացող մեքենաների շարժիչների կահավորում հատուկ ձայնամեկուսիչ պատյաններով, տեխնոլոգիական սարքավորումների տեղադրում տատանումները մեկուսացնող հատուկ հիմքերի վրա, բաց դիմածածկոցներով սարքավորումների և մեխանիզմների շահագործման բացառում, աշխատակիցների ապահովում աղմուկից պաշտպանվելու անհատական միջոցներով, աղմուկի մակարդակի պարբերական վերահսկում:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ բացահանքի տարածքում, ավտոճանապարհներին, արտադրական հրապարակի տարածքում՝ օդի դրական ջերմաստիճանի և չոր եղանակի դեպքում՝ շաբաթական մեկ անգամ 24 ժամ տևողությամբ,

2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ,

3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, աղտոտիչ նյութերով արտադրական հրապարակի և մոտեցնող ճանապարհի շրջակայքի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝

տարեկան մեկ անգամ հաճախականությամբ: Մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 550.0 հազար ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Որոտնավան բնակավայրի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային լսումներ: Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Սյունիքի մարզպետարանից, Սիսիանի համայնքապետարանից ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները ուղարկվել է ձեռնարկողին լրամշակման, սակայն հաշվի առնելով փորձաքքնության ընթացքում Սիսիան համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 16-ի թիվ 1210 բացասական կարծիքը՝ Որոտնավան բնակավայրը Սիսիան համայնքի կարևոր զբոսաշրջային ուղղություններից է, որտեղ գտնվում են Դավիթ Բեկի ամրոցը, Մելիք Թանգու կամուրջը, Որոտնավանի տաք ջուրը և արագ տեմպերով զարգացող հյուրատնային բիզնեսը և հանրային երկրորդ լսման ընթացքում հանրության մեծամասնության կարծիքը՝ բնակավայրը համարվում է տուրիստական գրավչություն ունեցող վայր և հանքի շահագործումը բացասական կանդրադառնա զբոսաշրջության զարգացման վրա և հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասը հանքավայրի արդյունահանման աշխատանքները համարվում է անհամատեղելի վերը նշված պատճառներով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՀԻԴՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Որոտնավանի բազալտային անդեզիտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան